ՎԱՀԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
VAHAN ZAKARYAN

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՍՈՒՅԹ

Քաղաքականությունը հասարակական այն բնագավառներից է, որտեղ պրակտիկան գլխավորապես խոսույթային է: Քաղաքական ճանաչողությունը ըստ սահմանման հիմնված է գաղափարախոսության վրա, իսկ քաղաքական գաղափարախոսությունները մեծամասամբ արտահայտվում են խոսույթի միջոցով: Մեր ուսումնասիրությունների կենտրոնում են այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն քաղաքականության, գաղափարախոսության և խոսույթի միջև:

20-րդ դարի առաջին կեսին, ինչպես քաղաքականության մեջ, այնպես էլ հասարակական գիտություններում «գաղափարախոսություն» հասկացությունը բացասական հարանշանակությամբ էր բնորոշվում և հաճախ օգտագործվում էր ի հակադրություն «օբյեկտիվ գիտելիք» հասկացությանը (Billig 1991; Eagleton 1991; Larrain 1979):

Ի սկզբանե «գաղափարախոսություն» հասկացությունը բացասական իմաստ չի ունեցել: Այն առաջարկվել է ֆրանսիացի փիլիսոփա դը Տրասիի կողմից մոտ երկու դար առաջ որպես ուսումնասիրության նոր բնագավառ, որի առարկան գաղափարներն են: Դարաշրջանի քաղաքական գիտություններում այդ հասկացությունը կիրառվել է ավելի չեզոք նշանակությամբ, օրինակ՝ քաղաքական համոզմունքների համակարգերի նկատմամբ (Freeden 1996):

Գաղափարախոսական գերիշխանության ամենաարդյունավետ ձևերից մեկն արտահայտվում է նրանով, որ գերիշխանության ենթարկված (ենթարկվող) խմբերը գերիշխանության այդպիսի ձևերն ընդունում են որպես բնական: Ա. Գրամշին գաղափարական գերիշխանության այդպիսի տեսակները «հեգեմոնիա» է համարում (Gramsci 1971): Պ. Բուրդյոյի աշխատություններում «գաղափարախոսություն» եզրը հազվադեպ է հանդիպում, այն դիտվում է որպես անորոշ և հաճախ գործածվում է մյուսներին, այսինքն նրանց, ովքեր մեզ հետ համաձայն չեն, վարկաբեկելու համար (Bourdieu, Eagleton 1994): Բուրդյոն առաջ է քաշում խորհրդանշական իշխանության և խորհրդանշական բնության հասկացությունները, որոնք իրենց գործածությամբ տարբերվում են գաղափարախոսություն ասվածից: Հեղինակն իր ուշադրությունը հիմնականում կենտրո-

նացնում է այն հասարակական պայմանների վրա, որոնցում իրականացվում է խոսույթային և խորհրդանշական իշխանությունը:

Առավել պարզունակ սահմանմամբ գաղափարախոսությունը տվյալ խմբի համար ընդհանուր հասարակական պատկերացումների հիմքն է: Կարևոր է նշել, որ գաղափարախոսություններ ունեն ոչ միայն գերիշխող խմբերը, ենթարկվող խմբերին հատուկ են, օրինակ՝ դիմադրության և հակադրության գաղափարախոսությունները: Գաղափարախոսությունը կարող է ընդհանուր լինել ինչպես փոքրիկ սոցիալական խմբերի, այնպես էլ ողջ դասակարգերի և համայնքների համար՝ ներկայացնելով վերջիններիս հիմնարար շահերը: Գաղափարախոսություններն ունեն ինչպես սոցիալական, այնպես էլ ճանաչողական հատկանիշներ: Ճանաչողական պլանում՝ գաղափարախոսությունը հիշողության մեջ արմատացած հասարակական համոզմունքների համակարգի առանձնահատուկ տեսակ է: Գաղափարախոսությունները, ինչպես և լեզուն, հիմնականում սոցիալական բնույթ են կրում: Չկան անհատական կամ անձնական գաղափարախոսություններ, վերջիններիս գործածությունը կարող է լինել այդպիսին: Պարզ է, որ խմբերի ինքնությունը հիմնված է ոչ միայն դրանց կառուցվածքային հատկանիշների վրա, այլև դրանց գաղափարախոսության:

Գաղափարախոսությունները լավը կամ վատը չեն լինում: Կան դրական (հաճախ ուտոպիստական) և բացասական գաղափարախոսություններ՝ կապված դրանց արժևորողի տեսակետից, արժեքներից և խմբային պատկանելությունից:

Սոցիալական պլանում՝ խմբի համար ընդհանուր ոչ բոլոր համոզմունքներն են գաղափարախոսական: Հասարակությունում գաղափարախոսական տարբերություններ ունեցող խմբերին հատուկ են ընդհանուր համոզմունքներ: Խոսքը համընդհանուր սոցիալ-մշակութային գիտելիքի մասին է, որն այդ հասարակությունում դիտվում է որպես նախագաղափարախոսական: Ասվածից բխում է, որ այն համոզմունքները, որոնք չեն վիճարկվում տվյալ համայնքի շրջանում, որոնք ընդհանուր չեն տարբեր գաղափարական խմբերի համար, բնույթով ոչ գաղափարախոսական են այդ համայնքի ներսում:

Գաղափարախոսության վրա հիմնված հասարակական դրսևորումները ընդհանուր և վերացական են: Դրանք սոցիալական գործունեությանը և կոնկրետ խոսույթներին կապվելու համար պետք է դիտարկվեն համատեքստերում և որոշակիացվեն մտավոր մոդելներում, խոսքը այնպիսի կառույցների մասին է, որոնք վերահսկում են խոսույթը, փոխներգործության ակտը և այլ սոցիալական գործածներ: Հենց մտավոր ձևերի միջոցով է, որ խոսույթները կարող են ազդել

սոցիալական դրսևորումների և գաղափարախոսությունների վրա ու վերարտադրել դրանք:

Գաղափարախոսությունները հարաբերականորեն կայուն են, մեկ ակնթարթում կոմունիստ, հանրապետական կամ քրիստոնյա-դեմոկրատ չեն դառնում: Գաղափարախոսությունների մեծամասնությունը ձեռք է բերվում տարիների ընթացքում և ակտիվ է մնում խմբի անդամների ողջ կյանքում:

Շատ գաղափարախոսություններ ակտիվ դրսևորվում են խմբերի միջև մրցակցության, կոնֆլիկտի, գերիշխանության և դիմադրության մեջ՝ դրանով սոցիալական պայքարի մաս կազմելով: Ահա թե ինչու շատ մտավոր մոդելների գաղափարախոսություններ հիմնված են այն տարբերակման վրա, թե ինչ է մտնում մեր խմբի մեջ, և ինչն է դուրս նրանից, դա *մեր* և *նրանց* տարբերակումն է, ինչը հիմնականում վկայում են գաղափարախոսական խոսույթները:

Անհատը կարող է բազմաթիվ խմբերի անդամ լինել, հետևաբար՝ կարող է «մասնակցել» բազմաթիվ գաղափարախոսությունների: Այսպես, նա կարող է միաժամանակ լինել ազգայնամոլ, սոցիալիստ, ֆեմինիստ: Բայց եթե բոլոր այդ գաղափարախոսությունները խոսույթում կամ սոցիալական այլ գործածելում միաժամանակ ակտիվացվեն, դա կարող է բերել կոնֆլիկտների:

Գաղափարախոսությունները ձեռք են բերվում անհատի մակարդակում և վերարտացոլվում են սոցիալական մակարդակում՝ խմբի և մասնավորապես նրա խոսույթների սոցիալական գործարկությունների միջոցով:

Խմբի բոլոր անդամները չունեն (և դա պարտադիր չէ) միևնույն գիտելիքը կամ գաղափարական փորձը, ոչ էլ ստիպված են պարզորոշ կերպով ի ցույց դնելու իրենց գաղափարախոսական գիտելիքը:

Մեկ գաղափարախոսություն օգտագործելու փաստը կարելի է համեմատել լեզվի օգտագործման հետ՝ առանց վերջինիս քերականությանը տիրապետելու: Իրականում շատ գաղափարախոսություններ ձևավորվում են խմբային, կոն ֆլիկտային կամ գերիշխանության, դիմադրության հարաբերությունների ներքո: Այդ հարաբերությունները ենթադրում են գաղափարախոսական բանավեճեր, ինչը բնական է, քանզի խմբերի անդամների մեծամասնությունը ծանոթ է իրենց և մյուս խմբերի հիմնարար գաղափարախոսական սկզբունքներին: Միայն այդ դեպքում են նրանք կարողանում պաշտպանել իրենց վտանգված շահերը:

Գաղափարախոսությունները, կազմելով խմբի հասարակական դիրքորոշումների աքսիոմատիկ հիմքը, վերահսկում են անհատների խոսույթները և խմբի անդամների այլ սոցիալական գործառնությունները:

Կարևոր է նշել, որ գաղափարախոսության տեսությունը թերի կլիներ առանց արտակա ճանաչողական բաղադրիչ մասի. զբաղվել գաղափարախոսության ուսումնասիրությամբ առանց սոցիալապես ընդունված «գաղափարներ»-ի բնույթի և գործառույթների մասին խոսելու՝ տեսության պլանում անբավարար է թվում:

Գաղափարախոսությունները՝ որպես սոցիալապես ընդունված ճանաչողական միջոցներ, հիմնարար ազդեցություն ունեն սոցիալական գործառնությունների, փոխներգործության ու ներխմբային և միջխմբային հարաբերությունների վրա: Գաղափարախոսական գործառնությունների հիմնական սոցիալական գործառույթներն էլ փոխադարձաբար պետք է ներկայացվեն որպես դրանց ստորադաս գաղափարախոսությունների բաղադրամասեր: Սա այն պատճառներից մեկն է, ըստ որոնց գաղափարախոսության հասարակական և ճանաչողական մոտեցումները պետք է միասնաբար դիտարկվեն:

Արդեն անդրադարձել ենք գաղափարախոսության հարաբերական կայունությանը, բայց պետք է նշել, որ վերջինս միաժամանակ նաև շարժունակ է, փոփոխական և սուբյեկտիվ: Կայունությունը բխում է *խմբերի* մտավոր պատկերացումներից և դիրքորոշումներից, իսկ ահա երբ խոսքը վերաբերում է *խմբի անդամների՝* գաղափարախոսության վրա հիմնված մտավոր մոդելներին, որոնք վերահսկում են խոսույթը տվյալ հասարակական իրադրության մեջ, հարց է բարձրանում գաղափարախոսության սուբյեկտիվ բնույթի մասին: Հավելենք, որ գաղափարախոսությունը ակտիվ գործում է ոչ միայն խոսույթի տիրույթում, այլև վերահսկում է այլ սոցիալական գործառնություններ ևս, ինչպիսիք են, օրինակ, խտրականության կամ բռնության ձևերը:

Նշենք, որ գաղափարախոսությունները մենք առաջնահերթորեն դիտարկում ենք հասարակաճանաչողական ընկալումներից ելնելով, և ոչ թե հուզական: Այսպես, կարելի է հաստատուն բացասական կարծիք ունենալ ահաբեկիչների վերաբերյալ, բայց չի կարելի անընդհատ զայրույթ արտահայտել նրանց նկատմամբ, և փաստացիորեն հնարավոր չէ միևնույն հուզական իրավիճակում գտնվել, ինչ որ այլք: Պարզ ասած՝ երբ գաղափարախոսությունն ընդունվում է որևէ սոցիալական խմբի կողմից, այն չի կարող հուզական լինել, իսկ ահա տվյալ գաղափարոսության կիրառումը տվյալ խմբի անդամի կողմից կոնկրետ իրավիճակում կարող է արտահայտվել հույզերի միջոցով: Ըստ այդմ՝ պետք է կարողանալ տարբերակել գաղափարախոսությունները խոսույթում դրանց իրական դրսևորումներից, որը տեղի է ունենում փոխներգործության կամ այլ սոցիալական գործառնությունների ժամանակ:

Գաղափարախոսության ընդհանուր տեսությունը, որին մենք անդրադարձանք, առանձնահատուկ կերպով է դրսևորվում քաղաքականության դաշտի շրջանակներում. այս պարագայում այն վերաբերում է քաղաքական գործիչներին, քաղաքական ճանաչողությանը, քաղաքական գործառնություններին և քաղաքական խոսույթին, որոնք քաղաքական խմբեր են բնորոշում, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, խորհրդարանի անդամները կամ սոցիալական շարժումները: Այն գաղափարախոսությունները, որոնք դադարում են միայն ընդհանուր սոցիալական գործառույթներ կատարելուց և ձգտում են քաղաքականության դաշտում քաղաքական գործառույթների, պետք է կոչել քաղաքական գաղափարախոսություններ: «Քաղաքականություն» եզրաբառը մենք դիտում ենք որպես քաղաքական բնագավառի գործընթացների բնութագրիչ, ըստ այդմ՝ որպես քաղաքական գաղափարախոսություն ընդունում ենք, ասենք, կոմունիզմը, և ոչ թե քիմիկոսների մասնագիտական գաղափարախոսությունը: Ընդհանրապես գաղափարախոսությունները, ինչպես նաև խոսույթները, պետք է դասակարգել ըստ այն սոցիալական ոլորտի, որում նրանք գործառնում են: Երբ խոսքը քաղաքական դաշտի մասին է, որպես բնութագրիչներ առաջնահերթորեն նշում ենք քաղաքական գործիչներին, բայց չպետք է մոռանալ նաև ավանդաբար ընդունված բնութագրիչները (դեսկրիպտորները), ինչպիսիք են քաղաքական համակարգերը (օրինակ՝ ժողովրդավարություն, բռնապետություն), դրանց մակրոսոցիալական առանձնահատուկ գործողությունները, ինչպիսիք են կառավարումը, օրենսդրությունը, ընտրությունները կամ որոշումների կայացումը, նրանց միկրոգործառնությունները, փոխներգործությունը կամ խոսույթները, ինչպիսիք են խորհրդարանական բանավեճերը, ընտրարշավները կամ ցույցերը, նրանց սոցիալական յուրահատուկ հարաբերությունները, նորմերն ու արժեքները, ինչպիսիք են ազատությունը, հավասարությունը, նրանց քաղաքական ճանաչողությունը, ինչպիսին է քաղաքական գաղափարախոսությունը:

Սոցիալական որևէ ոլորտ որպես գաղափարախոսական ներկայացնելով՝ մենք ինքնըստինքյան դա վերագրում ենք քաղաքականությանը, որի շրջանակներում հենց հակադրվում են խմբերը և գործում են իշխանությունը, պայքարը և շահերի բախումը: Սրցակցության մեջ մտնելու համար խմբերը, բացի լավ կազմակերպված լինելուց, պետք է նաև գաղափարախոսական գիտակցություն ունենան: Թերևս միայն քաղաքական կուսակցություններին է հաջողվում իրենց ծրագրերով բացահայտորեն ձևակերպել իրենց գաղափարախոսությունները և վերջիններիս հիման վրա փորձել նոր կողմնակիցներ գրա-

վել: Թերևս միայն քաղաքական գաղափարախոսություններն են չափից ավելի մեծ ոգևորությամբ պաշտպանվում կամ վիճարկվում լայն զանգվածների կողմից: Այլ կերպ ասած՝ քաղաքական գործընթացը գլխավորապես գաղափարախոսական գործընթաց է, իսկ քաղաքական ճանաչողությունը հաճախ ուղղակիորեն նույնացվում է գաղափարախոսության հետ (Freeden 1996; Eatwell 1999; Leach 2002):

Ընտրությունները, խորհրդարանական գործունեությունը, քաղաքական արշավները, պրոպագանդան, ցույցերը և քաղաքական դաշտի այլ երևույթներ նույնպես բնույթով գաղափարախոսական են: Այսպես, մեծ տարածում են վայելում պառլամենտական բանավեճերը աջերի և ձախերի միջև, որոնցում նրանց քաղաքական գաղափարախոսությունների հակադրությունն արտահայտվում է որդեգրած քաղաքական վարքի, ձեռնարկած միջոցների և ընդունած որոշումների օգնությամբ:

Եթե մենք քաղաքականության ոլորտը դիտարկում ենք որպես խորապես գաղափարախոսական, նույնը կարող ենք ասել քաղաքական գործառնությունների և ուրեմն՝ քաղաքական խոսույթի մասին (Chilton 1995, 2004; Wilson 1990): Իրականում ոչ միայն քաղաքական գաղափարախոսություններն են մասնակցում քաղաքական խոսույթի և այլ քաղաքական գործառնությունների արտահայտմանն ու ըմբռնմանը, այլև նույն այդ գաղափարախոսություններն են արտահայտվում վերջիններիս օգնությամբ: Այլ կերպ ասած՝ խոսույթի միջոցով է, որ գաղափարախոսությունը կարող է արտակայորեն արտահայտվել և ձևակերպվել: Այլ քաղաքական գործառնությունները կարող են միայն ներակայորեն ցույց տալ կամ փորձարկել գաղափարախոսությունները, ինչպես, օրինակ, ռասիստական կամ քաղաքական գաղափարախոսությունների վրա հիմնված խտրականության գործառնությունների դեպքում: Բայց հենց խոսույթի օգնությամբ ենք մենք բացահայտում, որ նման խտրականություն առաջ է գալիս, որովհետև, ասենք, *նա սեռամոլ է* կամ *նրանք սոցիալիստ են:*

Քաղաքական գաղափարախոսությունները ձեռք են բերվում, արտահայտվում, տարածվում և վիճարկվում խոսույթի միջոցով: Նշենք, որ չնայած գաղափարախոսության վերաբերյալ գրականության առատությանը՝ քչերն են անդրադարձել խոսույթ-գաղափարախոսություն հարաբերություններին, եթե չհաշվենք խոսույթի քննադատական վերլուծության շրջանակներում առաջ քաշված որոշ հարցադրումներ (Pêcheux 1982; van Dijk 1998; Wodak, Meyer 2001):

Խոսույթի և գաղափարախոսության հարաբերությունները սովորաբար ուսումնասիրվում են քաղաքական խոսույթի կառուցվածքային առանձնահատ-

կություններից ելնելով (բառապաշարի ուսումնասիրություն, *մենք և նրանք* դերանուններ, փոխաբերություններ և այլն): Շատ կարևոր է նաև ուսումնասիրությունների ընթացքում դիտարկել համատեքստի առանձնահատկությունները: Ուղղակի նշելով, որ քաղաքական խոսույթում շատ ենք հանդիպում *մենք* դերանվանը, մենք ոչինչ չենք ասի, եթե դրա գործածությունը չկապենք այլ կարգերի, ինչպիսիք են *ով է խոսում, երբ, որտեղ, ում հետ,* այսինքն՝ քաղաքական իրադրության առանձնահատուկ հայեցակերպերի հետ:

Քաղաքական գործող անձանց վարքը տվյալ քաղաքական իրադրությունում հասկանալու համար անհրաժեշտ է ճանաչողական կապ ստեղծել խոսքի և իրադրության միջև, ուսումնասիրել քաղաքական իրադրության մտավոր մոդելը, ինչի մասին խոսել է վան Դեյկը (van Dijk 1999, 2001, 2003): Այդ մոդելները սահմանում են, թե ինչպես են մասնակիցները վերապրում, մեկնաբանում և ընկալում քաղաքական իրադրության՝ իրենց համար կարևոր հայեցակերպերը: Այդ յուրահատուկ մտավոր մոդելները կարելի է համատեքստ անվանել: Այլ կերպ ասած՝ կոնտեքստները հաղորդակցական իրադրությունում մասնակիցների սուբյեկտիվ սահմանումներն են: Դրանք վերահսկում են խոսույթի արտահայտման և ըմբռնման բոլոր ասպեկտները:

Այսպիսով՝ քաղաքական խոսույթը բնութագրվում է ոչ միայն իր կառուցվածքի տեսանկյունից, այլև՝ ըստ քաղաքական համատեքստի: Երբ անհատն իրեն դրսևորում է որպես Աժ պատգամավոր, ընդդիմության լիդեր կամ ցուցարար, նա պատկանում է քաղաքականության ոլորտին վերաբերող համատեքստի, ըստ այդմ՝ ընկալվում է որպես այդպիսին: Քաղաքական համատեքստերն էլ իրենց հերթին բնութագրվում են առանձնահատուկ շրջանակներում, ինչպիսիք են խորհրդարանի շենքը, այդ շենքում տեղի ունեցող բանավեճերը կամ քննարկումները և այլն: Քաղաքական գործող անձինք ունեն կոնկրետ քաղաքական գիտելիք և ընդունում են որոշակի քաղաքական նորմեր ու արժեքներ, ինչպես նաև քաղաքական գաղափարախոսություններ: Համատեքստայնացման այս ձևով հնարավոր է կապ ապահովել մասնակիցների գաղափարախոսությունների և նրանց խոսույթների միջև (Gumperz 1982): Տեքստերն ու խոսքը խոսույթային ձևով արտահայտում են գաղափարախոսությունները, որոնք վերջին հաշվով պատկանում են մարդկանց՝ քաղաքական գործիչ թե ցուցարար, և դրսևորվում են տարաբնույթ խոսույթային գործառնություններում:

Այնպես, ինչպես խոսույթները կարող են լինել գաղափարախոսական, երբ դրանք հիմնված են գաղափարախոսությունների վրա, այնպես էլ քաղաքական համատեքստերի կառուցվածքները և գործառնությունները նույնպես կարող են նման գաղափարախոսական հիմք ներկայացնել: Իրականում

խորհրդարանի անդամ հանդիսանալը ենթադրում է, որ գոյություն ունի պառլամենտական համակարգ, այսինքն՝ ժողովրդավարական գաղափարախոսություն, այնինչ բռնապետ լինելը այլ գաղափարախոսություն է ենթադրում:

Կարևոր է, սակայն, նշել, որ նման կարգերը մշակութային առումով հարափոփոխ են. դժվար չէ հասկանալ, որ, ասենք, խորհրդարանի անդամ լինելը չի կարող քաղաքական դաշտի համընդհանուր կատեգորիա համարվել: Այն երկրներում, որոնք զուրկ են պառլամենտական համակարգից, այլ տիպի քաղաքական գործառույթներ և մասնակիցներ կհանդիպենք՝ միայն իրենց բնորոշ առանձնահատկություններով:

Գործաբանական մոդելում տարբեր կարգերում պարունակվող տեղեկատվությունը ամենից առաջ վերահսկում է խոսքային ակտերը, որոնք ազդեցություն են գործում տվյալ համատեքստում: Միևնույն ասույթը մենք կարող ենք դիտարկել և որպես քաղաքական խոստում, և որպես սպառնալիք՝ կախված իշխանությունից, մասնակիցների հարաբերություններից, նրանց քաղաքական դիրքորոշումներից (*իմ և ձեր* կուսակցություն), ինչպես նաև նրանց՝ հասցեատիրոջը օգնելու կամ վնասելու մտադրություններից:

Ն. Արուտյունովան նշում է, որ խոսույթի կենսական համատեքստը ձևավորվում է որոշակի ֆրեյմների կամ սցենարների մեջ, այդ պատճառով դրանց մշակումը խոսույթի տեսության գլխավոր մասերից է (Арутюнова 1990: 137):

Գործաբանական համատեքստային մոդելները նաև վերահսկում են մտավոր մոդելի տեղեկատվության ընտրությունը, որը սուբյեկտիվորեն սահմանում է այն, ինչի մասին մասնակիցները խոսում են, օրինակ՝ Խորհրդային Միության փլուզումը. այստեղ աշխարհի տարբեր մոդելների խնդիրն է, ինչպես նաև ըստ խոսքային իրադրության՝ համապատասխան քաղաքական գիտելիք օգտագործելը: Մենք աշխարհի մասին որոշակի մոդել ենք ստեղծում՝ այն հակադրելով արտաքին օբյեկտիվ իրականությանը: Աշխարհի տվյալ մոդելը ներառում է մեր կողմից ձևակերպված ֆրեյմները, սցենարները և մեր դիրքորոշումները, որոնք բոլորը գիտելիքի միավորներ են համարվում և մեծ նշանակություն ունեն քաղաքական խոսույթում: Աշխարհի մոդելները բնութագրվում են նկարագրական և ժամանակային տեսանկյուններից: Ժամանակային տեսանկյունից տարբերակում ենք աշխարհի անցյալ, ներկա և ապագա մոդելներ, ընդ որում՝ անցյալի մոդելը համատեքստ է հանդիսանում ներկայի համար, դրա շնորհիվ ներկան իմաստ է ստանում, այնուհետև անհրաժեշտություն է առաջանում աշխարհի ներկա մոդելի ֆոնի վրա ապագա աշխարհի մոդելն իմաստավորելու: Այդ գործընթացը տեղի է ունենում քաղաքական

խոսույթի կարևոր առանձնահատկություն համարվող մենք-նրանք երկատման շրջանակներում, երբ կարող են ձևավորվել ներկա աշխարհի մեր՝ մեր կողմից դրական գնահատականի արժանացած մոդելը և նրա՝ ոչնչացման ենթակա մոդելը, որոնք որոշակի պայմանների իրագործման/չիրագործման պարագայում կարող են հանգեցնել ապագա աշխարհի ցանկալի կամ ոչ ցանկալի մոդելների ձևավորմանը: Ս. Զոլյանը մատնանշում է, որ քաղաքական խոսույթում այն, ինչ բնորոշվում է վատ գնահատականով, համարվում է ոչ նախընտրելի դեոնտիկական տրամաբանության տեսանկյունից, հետևաբար ենթարկվում է ոչնչացման: Այսինքն՝ պետք է լինի իքս- իքսը նախընտրելի է- իրականություն է; պետք չէ, որ լինի իքս - իքսը նախընտրելի չէ - իրականություն չէ (Зоян 2000): Փաստորեն ստացվում է, որ անցյալը հիմնային տեղեկատվությունն է կամ թեման, որի ֆոնի վրա հաստատվում է ներկա աշխարհը՝ նոր տեղեկատվությունը կամ ռեման: Այսինքն՝ հիմնայինը հասցեատերերի կողմից ընդունվում է որպես այդպիսին, իսկ նորը՝ որպես այդ հիմնայինի հիման վրա հաստատված կամ պաշտպանված տեղեկատվություն (Gee 1999; Halliday 1994):

Վերջապես, համատեքստային մոդելները վերահսկում են քաղաքական խոսույթի բոլոր ոճային մակարդակները, ինչպիսիք են լեքսիկական միջոցները, դերանունները, շարահյուսական կառուցվածքը և այլ քերականական միջոցներ, որոնք կախված են իրադրության տեսակից: Համատեքստային մոդելները վերահսկում են նաև քաղաքական խոսույթի ձևաչափը և ընդհանուր սխեման, որի մեջ մտնում են, օրինակ, խոսքահերթերի կազմակերպումը բանավեճի ժամանակ, քաղաքական հարցազրույցի կառուցվածքը, կուսակցության ծրագրի և քաղաքական արշավի կառուցվածքային առանձնահատկությունները: Այն կանոնները, որոնք վերաբերում են պառլամենտական փոխներգործությանը և դրա մասնակիցներին, կապված են խորհրդարանի անդամների կողմից նախածեռնված բանավեճի խոսույթային կառուցվածքի հետ:

Մասնակիցների քաղաքական գաղափարախոսությունը վերահսկում է ոչ միայն նրանց ասելիքի մեծ մասը, այլև՝ նրանց՝ այլ բանախոսներին հասկանալու ձևը: Եթե ծայրահեղ ձախականների ներկայացուցիչը ներգաղթը սահմանափակելու կոչ է անում, այն անմիջապես կընկալվի և կմեկնաբանվի որպես ռասիստական, իսկ մեր կուսակից աջական ընկերոջ նմանատիպ արտահայտությունները նման մեկնաբանության չեն արժանանա:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ խոսույթի հատկանիշներն ու բաղադրիչներն ամենևին չեն գտնվում գաղափարախոսությունների մշտական ազդեցության տակ: Այսինքն՝ օրինակ, երբ նշում ենք, որ մարդիկ տարբեր գաղափարախոսություններ ունեն, դա չի նշանակում, որ նրանց օգտագործած քերակա-

նությունը տարբեր է: Սոցիալ-մշակութային գիտելիքը, որը ներառում է լեզուն, բնորոշում է համայնքները և ոչ՝ գաղափարախոսական խմբերը: Իսկ ահա խոսույթի այն տարրերը, որոնք որոշակիորեն ազդեցություն են կրում գաղափարախոսություններից, աչքի են ընկնում համատեքստային փոփոխականությամբ:

Արդեն համոզվել ենք, որ գաղափարախոսությունները հաճախ բևեռացված կառուցվածք ունեն և կարող են արտահայտել մրցակցության և այս կամ այն խմբին պատկանելու հետ կապված կոն ֆլիկտ, ինչպես նաև *խմբին հատուկ* և *խմբից դուրս* դասակարգումը, որոնք ավելի ցայտուն են դրսևորվում խմբի անդամների ոչ օբյեկտիվ անձնական մտավոր մոդելների շրջանակներում: Գաղափարախոսական խոսույթին բնորոշ են հետևյալ հիմնական հնարները.

- մեր դրական կողմերի ընդգծում,
- նրանց բացասական կողմերի ընդգծում,
- մեր բացասական կողմերի մեղմացում,
- նրանց դրական կողմերի մեղմացում:

Եթե շարժվենք վան Դեյկի տրամաբանությամբ, ապա տվյալ հնարներն օգտագործելով հնարավոր կլինի այս կամ այն քաղաքական իրադարձության հիման վրա ներկա աշխարհի տարբեր մոդելներ կառուցել՝ որպես ելակետ կիրառելով քաղաքական խոսույթում մեծ արդիականություն վայելող *մենք-նրանք* երկատումը: Օրինակ՝ մենք կխոսենք այն դրական գործողություններից, որոնք մենք ենք իրականացրել, կվերհիշենք մեր կուսակցության այն քաղաքական խոստումները, որոնք իրականություն են դարձել, առաջ կբերենք այնպիսի բացասական թեմաներ, ինչպիսիք են պատերազմը, բռնությունները, թմրանյութերը՝ դրանք ասոցացնելով մեր քաղաքական հակառակորդի հետ: Մեր ասածի իմաստալիությունը կամրապնդենք հնչերանգի, շեշտադրման մոդուլյացիաներով, ձայնի ուժգնացմամբ (ինչպես ժամանակին Չերչիլն է ինքն իրեն առաջարկել), շարադասական համապատասխան կառուցվածքով, կրկնությամբ, փոխաբերությամբ, հեգնանքով, չափազանցմամբ, ոճական այլ հնարներով: Նմանատիպ հնարներ են գործում քաղաքական խոսույթում ակտիվ բոլոր գաղափարախոսությունների տիրույթում: Դրանք, որպես ընդհանուր ռեսուրսներ, ձեռք են բերվում գաղափարախոսական խմբի անդամների կողմից և օգտագործվում գաղափարներ և սոցիալական գործառնություններ իրականացնելու, ինչպես նաև դրանք պաշտպանելու համար:

Ուսումնասիրության ենթարկելով գաղափարախոսություն-քաղաքականություն-խոսույթ հարաբերությունների համակարգը՝ կարող ենք փաստել, որ այս 3 հասկացությունների (խոսույթի, գաղափարախոսության և քաղաքականության) միջև սերտ կապ կա, այն իմաստով, որ քաղաքականությունը հիմնականում նույնքան խոսույթային է, որքան գաղափարախոսական, գաղափարախոսություններն էլ առաջնահերթորեն արտահայտվում են խոսույթի միջոցով: Ըստ Ռ. Բարտի՝ քաղաքական գրի խնդիրն է միավորել իրական փաստերն ու գաղափարախոսական նպատակները, որտեղ առկա է «ապագայում ինչպիսին պետք է լինի աշխարհը» գաղտնի համատեքստը (Барт 1983: 315):

Ավանդաբար գաղափարախոսությունները բացասաբար սահմանվել են որպես կեղծ գիտակցություն: Իսկ ահա մեր կողմից ուսումնասիրված ժամանակակից բազմառարկայական մոտեցմամբ գաղափարախոսությունը բնութագրվում է որպես խմբերի կողմից ընդունված սոցիալական դիրքորոշումների աքսիոմատիկ հիմք: Այդ ընդհանուր գաղափարախոսությունները ստեղծում են խմբային առանձնահատուկ վարքագծի, գործելակերպի հիմքը, որը կարող է ազդել խմբերի անդամների անհատական կարծիքների, նրանց կողմից իրադարձությունների կառուցման և մեկնաբանման, ինչպես նաև այն սոցիալական գործառնությունների և խոսույթի վրա, որոնցում ներգրավվում են խմբի անդամները: Քաղաքականության մեջ գաղափարախոսությունները սահմանում են քաղաքական համակարգերը, կազմակերպությունները, շարժումները, քաղաքական գործառնությունները և քաղաքական ճանաչողությունը, որոնք արտահայտվում կամ գործի են դրվում քաղաքական խոսույթի միջոցով: Քաղաքական խոսույթում համապատասխան քաղաքական գաղափարախոսությունները գլխավորապես արտահայտվում են՝ հիմնվելով մեր դրական կողմերի և նրանց բացասական կողմերի ընդգծման և մեր բացասական կողմերի ու նրանց դրական կողմերի մեղմացման գործընթացների վրա: Վերոնշյալին առաջնություն տալով, ինչպես նաև դիմելով փաստարկային, ճարտասանական և իմաստային ամենատարբեր կատեգորիաների՝ հնարավոր է քաղաքական խոսույթի ընդհանրական վերլուծություն իրականացնել և ցույց տալ, թե ինչպես քաղաքական այս կամ այն գործող անձը փոխաբերությունների, համեմատությունների, մեղմասությունների, չափազանցումների և այլ կարգերի շնորհիվ արտահայտում է իր կողմից ընդունված խմբի գաղափարախոսությունը:

Գրականություն

1. Арутюнова Н.Д. Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М.: Сов. энциклопедия, 1990. с.136-137.
2. Барт Р. Нулевая степень письма // Семиотика. М.: Радуга, 1983. с. 306-349.
3. Золян С. Т. Язык политического конфликта: логико-семантический анализ, 2000 http://rss.archives.ceu.hu/archive/00001093/01/105.pdf
4. Billig M. Ideology and opinions: Studies in rhetorical psychology. London, Newbury Park, Calif.: Sage Publications, 1991. – 216p
5. Bourdieu P., Eagleton T. Doxa and Common Life: An Interview. // S. Zizek, Mapping Ideology. London: Verso, 1994. p. 265-277.
6. Chilton P. A. Security metaphors. Cold war discourse from containment to common house. New York: Lang, 1996. – 478 p.
7. Chilton P. A. Analysing Political Discourse: Theory and Practice, London: Routledge, 2004. – 226p.
8. Dijk T. Ideology. A Multidisciplinary Approach. London: Sage, 1998. – 374p.
9. Dijk T. Context models in discourse processing. // van Oostendorp, Herre, & Goldman, Susan R. (Eds.), The construction of mental representations during reading. Mahwah, NJ, USA: Lawrence Erlbaum Associates, 1999. p. 123-148.
10. Dijk T. Discourse, Ideology and Context. Folia Linguistica XXXV/1-2, 2001. p. 11-40.
11. Dijk T. Text and context of parliamentary debates. // Paul Bayley (Ed.), Cross-Cultural Perspectives on Parliamentary Discourse. Amsterdam: Benjamins, 2003. p. 339-372.
12. Eagleton T. What is ideology? // Ideology. An introduction. London: Verso, 1991. p. 1-32.
13. Eatwell R. Introduction: What are Political Ideologies? // R. Eatwell & A. Wright (Eds.), Contemporary Political Ideologies. London: Pinter, 1999. p. 1-22.
14. Freeden M. Ideologies and political theory. A conceptual approach. Oxford: Clarendon Press, 1996. – 593p.
15. Gee J. An introduction to discourse analysis. Theory and Method, London and New York: Routledge, 1999. – 176p.
16. Gramsci A. Selections from the Prison Notebooks of Antonio Gramsci. London and New York: Lawrence & Wishart; International Publishers, 1971. – 483p.
17. Gumperz J. J. Language and social identity. Cambridge: Cambridge University Press, 1982. –272p.
18. Halliday M.A.K. An introduction to functional grammar, second edition. London: Edward Arnold, 1994. – 434p.
19. Larraín J. The concept of ideology. London: Hutchinson. 1979. – 254p.
20. Leach R. Political ideology in Britain. New York: Palgrave, 2002. – 270p.
21. Pêcheux M. Language, Semantics and Ideology: Stating the Obvious. London and Basingstoke: Macmillan, 1982. – 244p.
22. Wilson J. Politically speaking. The pragmatic analysis of political language. Language in society. Oxford: Blackwell. 1990. – 203p.
23. Wodak R. What CDA is about – a summery of its history, important concepts and its developments. // R. Wodak & M. Meyer (eds.), Methods of Critical Discourse Analysis. London: Sage Publications, 2001. p. 1–13.